

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են առն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Գաղթականութեան պատճառները.— Ներքին տեսակետի վրա, Նամակ Հին-Բայազէթից: Ներքին լուրերը.— Արտաքին տեսակետի վրա, Թիֆլիսի: «Темпы» լրագրի մի յօդուած: Արտաքին լուրերը.— «Մշակի» հեռագիրները.— Յայտարարութիւնները.— Տեղեկացոյցը.— Բանասիրական: Տեղեկացոյցը:

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՆՈՒՆԵՐԸ

Թիֆլիսի հայերի մէջ, ինչպէս գիտէ արդէն մեր ընթերցողը, ձգտում կայ գաղթել իրանց հայրենիքից: Ի՞նչ են այդ գաղթականութեան պատճառները: Պատճառներ չատ կան:

Նախ երկուք որ քիւրդերը և թիւրքերը, հէնց որ ուստաց զօրքերը կը հեռանան, կրկին կը սկսեն գործել առաջվայ բարբարոսութիւնները: Երկրորդ պատճառը՝ տնտեսական աննախանձելի

ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառական հարստահարութեանց
կ. Պոլսի 1876 թ.

(Պաշտօնական հրատարակութիւնը ազգային պատրիարքարանի)

Կրօնափոխութիւններից յետոյ պատրիարքարանի արձանագրութեանց մէջ փոքր տեղ են բռնում սպանութիւնները (6 հոգի միայն). դա չատ տխուր մի երևոյթ է, որով մեկնվում է Տաճկաստանի հայի թշուառ գրութիւնը: Կրկին երբեք, այդ չափ տխուր, և գուցէ այս ասացուածը կը բարձրացնէ մեր դէմ մի այսպիսի հարց. «միթէ ցանկալի էր, որ մեծ թուով կոտորէին հայերն Տաճկաստանում?»

Մենք կենքի և բնութեան մէջ կատարված երևոյթները թէ և վերաբերում ենք մի նախասահմանաւ Տեսչութեան, բայց համոզված ենք, որ ամեն մի երևոյթ ունի իր իրական պատճառները: Եւ այսպէս էլ հայերի մէջ կատարված սպանութիւնների սակաւութիւնը չենք կարող վերաբերել մահմետականների գթութեանը. թէ նրանք աւելի մարդասիրաբար են վարվում հայերի հետ, մինչդեռ իրանց մէջ աւելի մեծ թուով են կոտորում միւր միւսին:

Պարզենք մեր միտքը. Մի հասարակութեան մէջ կատարված յանցանքների թիւը, նրանց բնաւորութիւնը և տեսակը ցոյց են տալիս նոյն հասարակութեան ներքին և արտաքին դրութիւնը: Եւ յանցանքների պատճառներն ու նրանց շարժառիթներն այնքան զանազանվում են, որքան զանազանվում է մի հասարակութեան կրթութեան աստիճանը միւսից և նրա տնտեսական դրութիւնը:

Առհասարակ նկատված է, մի հասարակութեան մէջ աւելի մեծ թուով կատարվում են սպանութիւնները, երբ աշխատութիւնը, արդար վատտակը և ապրուստի ապահովութիւնը ընդ-

գրութիւն է ժողովրդի մէջ, որ գլխաւորապէս հետևանք է պատերազմի: Երրորդ և ամենագլխաւոր պատճառը այն է որ, ինչպէս մեզ հաղորդում են թղթակիցները, հայոց հարուստները և հոգեւորականները գրգռում են ժողովուրդը դէպի գաղթականութիւնը, մեծացնելով գիւղական ժողովրդի աչքերում սպառնող վտանգը, սարսափեցնելով միամիտ հային նրա վիճակի մի մոլթ ապագայ ցոյց տալով:

Ի՞նչ է աղաների և հոգեւորականների նպատակը:

Նսենք թէ նրանք դիտակցաբար չեն ձգտում ազգը կորցնելու, բայց անգիտակցաբար նրանք հասնելու են նոյն հետևանքին: Նրանց նպատակն է ազատվել թիւրքաց տիրապետութենից, ապահովել իրանց անձը. նրանք եսական զգացմունքից շարժված

հանրացած չէ ժողովրդի բոլոր դասակարգերի մէջ, երբ զօրեղ անզօրին ճնշում է և խլում է նրա ձեռքի վաստակը.— Ասիական Տաճկաստանը այդ դրութեան արիւնոտ պատկերն է:

Ներկայացնում: Այստեղ ոչ միայն մասնաւոր գործը և աւաղակներ խլում են օտարի բարին, այստեղ ոչ միայն բռնակալ դարաւէյի ներկայացում են ժողովուրդը, այլ աւաղակներից կազմված ամբողջ խումբեր (որպէս քուրդերի անպատակներն) արշաւանք են գործում երկրի մի կողմից դէպի միւսը, յափշտակում են և ամեն տեղ տարածում են աւերմունք և աղքատութիւն: Մի փոքր ընդգիմադրութիւն յափշտակվողի կողմից վերջ է տալիս նրա կեանքին, և այստեղից առաջ են գալիս սպանութիւններն:

Սպանութիւնները այստեղ պատճառ են կայքի յափշտակութեան և նրա պահպանութեան համար գործ դրված երկու հակառակ ուժերի մէջ, և որքան աստիճան է լինում ընդգիմադրութիւնը, այնքան աճում է սպանութիւնների թիւը:

Բայց քննելով պատրիարքարանի արձանագրութեանց թւանշանները, մենք բոլորովին հակառակ եզրակացութեան ենք հասնում. Նրանցում հարստահարութիւնների թիւը հարկաւորապէս աւելի է քան սպանութիւնների: Ի՞նչ է պատճառը:

Մենք ուրիշ պատճառ չենք գտնում, բայց միայն այն, որ հայը Տաճկաստանում ամենին ընդգիմադրութեան զօրութիւն չէ ցոյց տալիս, նա բոլորովին կրաւորական դեր է խաղում, նա թույլ է տալիս քուրդին, տաճկին յափշտակել իր կինը, իր աղջիկը, իր մանկահասակ որդին, միայն իր անձին չէ դիպչել... Նա թույլ է տալիս յափշտակել իր ձեռքի վաստակը, խլել իր պապերից մնացած մի կտոր հողը, միայն իր կեանքին խնայել... Այսպիսի ստոր և ցած վարմունքի մէջ բնականաբար չատ փոքր թուով կը պատահէին սպանութիւններ, որովհետեւ հայը իր ընտանիքը, իր կայքը, իր պատիւը և ամեն ինչ որ սուրբ է իր համար՝ զոհում է միայն իր կեանքը պահպանելու համար: Բայց նա կեանքը զոհելու և իրաւունքը պահպանելու քաջութիւն չունի...:

Բայց սպանութիւնները մահմետականների

են գործում, իսկ ժողովրդի բաղմոլթեան, գիւղական ամբոխի վրա նրանք չեն էլ մոտճում:

Նրանց ի՞նչ փոյթ որ Հայաստանում էլ հայ չի մնայ, որ ամբողջ ազգը կը գաղթէ իր հայրենիքից...:

Մեր ամբողջ պատմութեան մէջ և մարդկութեան ամբողջ պատմութեան մէջ հարուստները և հոգեւորականները հասարակութեան այն դասակարգ էին կազմում միշտ որի համար հայրենիքը երկրորդական բան է, իսկ գլխաւորը նրանց համար անձնական նիւթական ապահովութիւնն է: Եւ ճշմարիտ՝ ոչ հարուստը, ոչ էլ հոգեւորականը կապված չեն հողի հետ: Հարուստը ուր որ գնայ միշտ ապահով գրութեան մէջ կը լինի իր շարժական կայքերի շուրջով: Հայոց ազգը կործանեց վաճառականութիւնը: Հոգեւորա-

մէջ աւելի մեծ թուով են պատահում, որովհետեւ մահմետականը այնպէս չէ վարվում որպէս հայը. նա գիտէ չարին չարով պատասխանել...:

Գուցէ ոմանք կը նկատեն, թէ ինչ կարող է անել ողորմելի հայը, երբ թուրքը և քուրդը սուր ունեն, բայց հայը չունի, նա ինչով կարող է ընդգիմադրվել իր զինուորով թշնամուն: Նա պէտք է խնայարկի բռնութեան դէմ և թող տայ, որ կողպտուն իրան, որպէս զի իր անձը կենդանի պահէ.— Այս բոլորը միամիտ մարդիկներին կարծիքն է, որոնք նայում են առաջից անարդար երեոյթների, որպէս վերին Տեսչութեանց սահմանված օրէնքներին վրա: Բայց մենք այս բանին չենք հաւատում, որ Աստուած տաճկին և քուրդին ձեռքում սուր տուած լինէր հային կողպտունը համար, և ոչ էլ մտածում ենք, թէ դա ժողովրդի մեղքն է համար, որ Աստուած պատժում է նրանց...:

Հայի ստրկութեան և նրա այժման թուլաստութեան պատճառներն այնքան բազմաբաշխ են, որ պէտք էր մեր ամբողջ պատմութիւնը քրքրել այս հարցը բացատրելու համար, բայց դա դուրս է մեր յօդուածի նպատակից: Այսօր քննենք միայն կասեցը. եթէ մի հայ, որ իր զբոսանքում ունէ մի քանի ոսկի, փութանալով այն գոմարում տալու և մի քանի գնելու, որ կրկին շահէ, եթէ նրա մի մասը տայ և մի զէնք գնէ իր միջրը և իր գլուխը պահպանելու համար, իմ կարծիքով, ոչ ոք նրան չի արգելի: Եւ եթէ նա այդ չէ անում, այլ հրէայի նման միշտ չհասիրութեան ետեւից է ընկած, ով է մեղաւոր, որ նրան կողպտում են:

Այն ուրիշ բան է, երբ մի կառավարութիւն ինքն է պահում զէնքը իր ձեռքում, իրան միայն է սեփականում նրա դործածութեան իրաւունքը, և հետևապէս ինքն հսկում է հպատակների հանգստութեան և ապահովութեան վրա, — բայց քանի որ Տաճկաստանը այդ անելու զօրութիւն չունի, այն ժամանակ հպատակների վրա է մնում անձնապաշտպանութեան հոգսը ինչ կերպով և ինչէր:

«Թող ուրիշ փրկէ, ես խըփշտեմ» ասում է հայկական առածը.— դա մի ծոյղ աղբի առած է, որի մէջ բովանդակվում է նրա կեանքի ամբողջ վարդապետութիւնը... Հայը զեռ սպասում

կանն էլ ուր որ գնայ, իր հետ ծուխ կունենայ, նրան հարկաւոր է հող հայրենիք: Նրան ապրելու համար բաւական է եկեղեցի և ծուխ, թէ և այդ լինի օտար մի երկրում:

Միայն բուն ժողովուրդը, գիւղական և արուեստաւոր ամբոխը կապված է իր հայրենիքի հետ՝ մինը հողի պատճառով, միւսը օրական աշխատանքի պատճառով:

Ժամանակ է այդ ճշմարտութիւնը հասկանալու, ժամանակ է մի զօրեղ ժողովրդական ոյժ կազմելու՝ աղաների և հոգեւորականների նպատակներին ընդգիմադրելու և գաղթականութեան ոգին, որ այդքան դարեր կործանեց Հայաստանը՝ զսպելու նպատակով:

Գ. Ա.

է... հրէայի համբերութեամբ սպասում է... եթէ ուրիշ փրկէ, ես խըփշտեմ» ասում է հայկական առածը.— դա մի ծոյղ աղբի առած է, որի մէջ բովանդակվում է նրա կեանքի ամբողջ վարդապետութիւնը... Հայը զեռ սպասում

Հայը իր ամբողջ կեանքում այսպէս է վարվել.— «Թող ուրիշ փրկէ, ես խըփշտեմ» և իր ստրկութիւնն այս քաղաքականութեան հետեւելու արդեւնքն է: Նա այսպէս է վարվել ոչ միայն իր քաղաքական կեանքում, այլ և գիտութեան, արհեստի, հարստութեան մէջ նոյնն է եղել.— նա ոչինչ չէ արդիւնաբերել, ոչինչ չէ տուել մարդկութեանը, այլ միշտ «խըփշտել է ուրիշ փրկածը...» Մենք չատ խիստ լեզու չենք գործածի հայի այս վարմունքի դէմ, միայն կասեցը, որ մուրացկանութիւնը ծոյցերի յատկանշն է... և մուրացկանի փորին չատ անգամ չ'աջողվի կշտաւալ օտարի փշաւքով...:

Իստաւաք դէպ, մեր լուսքը:

Ասեցիք, թէ հայեր վաւարութեամբ պատրված սպանութիւնների փոքր բաւանջանները, պատրիարքարանի արձանագրութեան համաձայն, ապացոյց են, նոյն իսկ հայերի թուլութեանը և նրանց ստրկալիկ հոգու ցածուլութեանը: Այս հարցը աւելի պարզելու համար հարկաւոր ենք համարում փոքր ինչ երկար խօսել հարստահարութիւնների և կառավարական խնդիրների մասին, որոնք պատրիարքարանի արձանագրութեանց մէջ համեմատաբար աւելի մեծ տեղ են բռնում:

Հարստահարութիւնների կատարվում են ըստ մեծի մասին տաճկական Հայաստանի հիւսիսարեւելեան մասում, և կենտրոնը, որպէս երեւում է պատրիարքարանի արձանագրութիւններից, համարելու է վաղայն ծովակի շուրջը գտնված երկրները: Այս երկրներն են Արդուսի նահանգը իր գաւառներով, Տեղրանալիերով, Նահանգը իր գաւառներով, և վասպուրականի երկիրը իր գաւառներով: Դրանք այն երկրներն են, որոնք աւելի խիտ բնակեցրած են հայերով, և աւելի հեռու դրած են Կ. Պոլսից: Հարստահարութիւնները կարելի է երեք տեսակի բաժանել. հարստահարութիւններ, որ կա-

Մեր բարեկամները ինչպե՞ս են գաղթականության լուրը «Մշակից» միջոցառարկե՞նք ամենի ակա՛նջին հասած է, ուստի ես էլ հարկադրված եմ չը համարելով կրկնել նոյնը, թե թիւրքաց Հայաստանը գաղթականության զոհ է լինում, ցանկանում եմ միմիայն տեղեկութիւն տալ հայ ազգին որ, ովքեր են լինում այդ գաղթականության գլխավոր պատճառը, թէ՛ն գաղթող հայերը տեղական են Օսմանեան կայսերութեան թոյլ կառավարութենից, թէ՛ն ամեն թիւրքիահայտաւ, զոհն գաւառացի, հայ, կը ցանկանայ, որ օր առաջ ազատով թիւրքաց լծի տակից, սակայն երբ հայը մտածում է, որ այդ ցանկալիութեանը հասնելու համար պիտի թողնել իր մայրենի երկիրը, իր պապերի և հայրերի օջախը ուր նա կեանքը ստացաւ, ինչպե՞ս է տեսնել, իր սուրբ եկեղեցին, ուր նա հողերապէս ծնունդ է առել, երբ մտածում է կեանքի և համոզման ազատութեան որոնելուն համար իր մայր հողը, եկեղեցին, աւաղանը և պապերի գերեզմանները, այդ ամենը իր սրտի նստիկական առարկաները պիտի թողնէ իր կրօնի և անձին ինչամի միտաբանութիւնների և բարբարոս ճորդերի ձեռքը անպատուութեան մէջ, այդ, այդ միտանակ հայի գլխի մազերը փռւել փռւել են կտրուած, անձն քստմտում և դողում է, այդ, այդ ամեն յիշողութիւնների ազդեցութեան ներքոյ գաւառացի հայը իր կեանքի և կայքի ապահովութեանը քաշուցութեամբ պատրաստութիւն է յայտնում զոհել և սպալով իր դառը վիճակը, պահպան կանգնել իր մայրենի հողին, սուրբ եկեղեցուն և հայոց նուիրական գերեզմաններին մինչև Տէրը կայացնէ իրան։ Մակայն մեր առաջնորդները, երկնքները և իշխանները բոլորովին անտարբեր մտօք ամեն բան՝ ազգի ապագան, սուրբ եկեղեցիների պնդապանութիւնը ոտքի տակ առնելով և իրանց անձի ապահովութեան վրա միայն մտածելով, և իրանց պարզամիտ ժողովուրդը զէպի գաղթականութիւնը կը հրաւիրեն։ Երեքները

տարվում են կառավարութեան պաշտօնակալներին կողմից, հարստահարութիւններ, որ վատարկում են ընդհանր զէր էրեւելիս իր (բռնակալ, ապստամբ) և թուրք անդեցութեան տէր անձինքների կողմից, հարստահարութիւններ, որ կատարվում են մասնատական հատարակ ժողովուրդի կողմից։

Կառավարութեան պաշտօնակալների կողմից եղած հարստահարութիւններն ըստ մեծի մասին վերաբերում են տէրութեան տուրքերին և հարկահաններին՝ անգլիականները Տուրքերի տեսակներն և նրանց վճարման ձևերն այնքան դատադատ են, որ անկարելի է այդ մասին մի որոշ տեսակետութիւն տալ։ Արդե՛հետեւ իւրաքանչիւր երկրում մի և նոյն տուրքը թէ՛ իր քաղաքական մէջ և թէ՛ ներքին հատկանշանք մէջ տարբերվում է, աւելի կախումն ունենալով հարկահանների բարոյական յատկութիւնից, քան թէ օրէնքի տրամադրութիւնից։ Բայց ժողովուրդը պաշտօններն պիտաւորապէս վերաբերում են տուրքերի անարդար բաշխմանը, որով մասնատականների հարկերի ծանրութիւնը ընկնում է հայերի վրա։ Հայը գիւրբնեւէ և հիւս բեռնակիր է, նա եղի համբերութեամբ կրում է իր ծանրութիւնը, որ քան և անտանելի լինէր նա։ Իսկ տաճիկը կարող է ըմբոստանալ կարող է թողնալ իրանից բռնութեան ձեռքից դրած բեռը։

Չհաւորական տուրքը հայերի վերաբերութեամբ այն պարտաւորութիւնների կարգին է, որ իր հետ արտօնութիւններ չունի։ Հայը որպէս մեր նկատողութեան մէջ յայտնեցինք, զինուորի փոխաբեր փող վճարելով, չէ վայելում այն բացառիկ իրաւունքները, որ չնորմավոր է պիտուր տուող մասնատականները։ Հայի զինուորական տուրքը համարենք մի կերպ տուգանք է, որ նրան տուածն է նա տալիս, օգուտ քաղելով նրա տնտեսական անհրաժեշտութիւնից։

Երբ առաջին անգամ բարձրացան Տաճկաստանի զինուորագրութեան հարցը, մեր պարբերական թերթերը դրա վրա երկար վիճեցին։ Եւ դեռ չլքում եմ այն յիշար վիճարկանութիւնները, Հայաստան մեծ մասի հոգեւոր յանգում էր այս ասացուածի մէջ։ «Հայը թիւղ զինուորի փոխաբեր փող տալ, նա փողը միշտ կարող է աշխատել, բայց հայի համար թանկ է իր արեւնը»։

Արքան վախճանում է այդ ազգը արեւնից, ամենին չը մտածելով, թէ փրկութիւնը արեւան մէջն է...

Մեր ազգի պատմութիւնը մեզ ուսուցանում է, երբ հայերն պարսիկների, մոջլների, արաբների և այլ տիրապետող ազգերի զօրքի մէջ զինուորներ ունեն, նրանք քիչ չէին պաշտպանում իրանց հայրենիքը նոյն ազգերի բարբարոսութիւններից, որոնք ծառայութեան մէջն էին։ Այսպէս է, հայը Տաճկաստանի զինուորական մէջ, եթէ արդէ օգուտ չը տար իր հայրենիքին, գոնէ այսքանը կը սովորէր, թէ բացի ստրկական խոտարնութիւնից կայ և մի ուրիշ բան անձնապաշտպանութեան համար՝ ոչինքը։

Բայց մենք համոզված ենք, եթէ հայերն թուրքաց զօրքերի մէջ զինուորներ ունենային, այսօր արեւմտային Տաճկաստանի հարստահարութիւններն մեծ մասամբ բարձրված կը լինէին։ Այս խօսքը երկար բացատրութիւնների կարօտ չէ։ Ով որ ճանաչում է Տաճկաստանը, ով որ գիտէ, թէ ինչ աղբիւրներից են ծագում հարստահարութիւնները, նա ևս մեզ հետ կը համոզվի, թէ զինեալ զօրքի դէմ միայն զինեալ մարդ կարող է պահպանել իր կայքը, իր ընտանիքը, իր պատիւը և այլն։ Եթէ չը զօրքին արեւմտի ֆէրմաններով կարգ-կանոնի մէջ պահել անկարելի է։

Մեր խօսքը կառավարութեան պաշտօնակալների հարստահարութեանց մասին էր։ Պատրիարքարանի արձանագրութեանց մէջ զինուորական տուրքից յետոյ աւելի աչքի է զարկում տասնամարդիկ տուրքը, որ ստացվում է մշակութեան բերքերից։ Այստեղ մշակված արդու թը չափաւորվում հասնում է վերջին աստիճանի անկարելիութեան։ Գիւղացին ստիպված է երկու տեսակ տուրք վճարել այն հողի համար, որը մշակում է։ Մինք կարածական տուրք կամ հողային հարկ, միւսը մշակած բերքի տասնորոշը։ Գա այն ժամանակ է լինում երբ հողը միմիայն մշակի սեփականութիւնն է։ Բայց որպէս երևում է պատրիարքարանի արձանագրութիւններից, հայերի սեփականութիւն եղած հողերը մեծ մասամբ թուրք և ջուրդ զէր էրեւելիս երբ ընտելութեամբ յափշտակել են։ Այս զէպըւմ հայը դարձել է զէր էրեւելի կամ իր նոր աղալի ձեռքում ճուրղ։ Այժմ նա իր

տունը և այնտեղ հայրենի օջախի մէջ մեռնելուն սպասել։ Մակայն քաղաք հասնելուն պէս կը ստիպ աղալի սպառնացած վտանգը։ Ահա, ընթերցող, տես ինչպիսի միջոցներով հայ աղաները գաղթականութեան են մատնում թշուառ ժողովուրդը, որ զրկված է ամեն տեսակ միջոցից գաղթականութեան տեղը հասնելու համար։

Բարեկանդացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր Նորին կայսերական Մեծութեան թագաւոր կայսրի անուանակոչութեան օրվայ պատճառով աշխատանքները տալարանում դադարեցրած լինելով, մեր թերթը վաղը հրատարակելու չենք, այլ «Մշակի» հետեւել համարը կը հրատարակենք ուրբաթ օրը։

«Մշակին» կարելի է գրվել չորս ամսով, այն է սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար։ Չորս ամսվայ բաժանորդութեան գինը 4 ռուբլ է։

Խնդրում ենք այնքան բաժանորդներին, որոնք դեռ չեն հասցրել «Մշակի» այս տարվայ բաժանորդական վճարը, շտապել հասցնել խմբագրութեանը իրանց պարտքը։

«Голосъ» լրագիրը պատմում է, որ Ռուսաստանից Ամերիկա գաղթած գերմանացի կոյո-նիստները կրկին ցանկութիւն են յայտնել վերադառնալ Ռուսաստան։ Նրանք գտնվում են այժմ ռուս-գերմանական սահմանի վրա գտնվող Ալգեյրենի քաղաքում, որտեղից գերմաններն լեզուով դրած խնդրք են ուղարկել իշխան Գորչակովին։ Խնդրքի մէջ նրանք յայտնում են թէ խաղված են եղել ամերիկացի ագենտներով և Ամերիկա հասնելով ոչինչ պարագայունք չը գտնելով և հողեր չը ստանալով, նրանց սպառնում էր սովմամա լինել։

Ինչպէս հաղորդում է «Русск. Миръ» լրագիրը նորերումս վԱՐՇԱՎԱՅԻ մօտ կալանաւորվեցաւ մի երիտասարդ որ և ուղարկվեցաւ Ս. Պետերբուրգ։ Յայտնվում է որ դա մի երիտասարդ է

մշակած հողի համար պարտաւոր է վճարել չորս տեսակ տուրքեր, որովհետեւ երկու աղայ ունի, մինը կառավարութիւնը, միւսը իր նոր կալուածատէրը։ Նա վճարում է կառավարութեանը կալուածական տուրքը և տասնամորդը առանձին, բայց զրանից վճարում է կալուածատիրոջը մի և նոյն հողի համար առանձին կալուածական տուրք և բերքի տասնամորդը։ Նրանք կայեցէ մշակ մարդու գրութիւնը, և այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչու նա թողնում է իր արօքը, թողնում է հայրենի երկիրը և գաղթում է օտար երկրներում բաղդ որոնելու...

Յիշեալ տուրքերի վճարման ձևերը աւելի ևս ստատկացնում են մշակի անբաղողութիւնը։ Կառավարութեան պաշտօնակալները տասնամորդի տուրքը տալիս են կապալով իրանց մերձաւորներին, և գաղտնի կերպով նրանց հետ ընկեր են դառնում։ Կապալաւուն, վարձկանը (մուլթէ-գիւմ) աւազակի չափ անգուլթ կը լինի և յալիշ տակող, մանաւանդ երբ իր անիրաւութեանց վրա հակող պաշտօնակալութիւնը իր գործունեութեանը և իր շահերուն ընկերակից է։ Պատրիարքարանի արձանագրութիւնները բաւականին սպառնացողներն, թէ որպէս են կողպատում կապալաւունները։ Նրանք բացի սովորական տասնամորդից առնում են շահնաւը և օւլէք հագգը կոչուած արգելված տուրքերը։ Նրանք, երբ բերքը գին չէ բերում, թողնում են, մշակի հոնձքը փոխում է, ոչնչանում է կալի մէջ, և այնուհետեւ տասնամորդի փոխարէն պահանջում են արձաթ փող։ Իսկ երբ որ մշակը փող չունի վճարելու, ծախել են տալիս նրա երկրագործական անհրաժեշտ պարագայքը և նրա անասունները։ Ահա զլիաւոր պատճառը, թէ ինչու հողագործութիւնը յառաջ չէ գնում արեւմտային Տաճկաստանում և ինչու, սրբ յաճախ կրկնվում է այս երկրում։ Ինչ անէ մշակը, երբ ինքն կառավարութիւնը ուղղակի և անուղղակի կերպով նրա ձեռքի վատտակ յափշտակում է, և եթէ մի բան չէ մտաւել էր, այն ևս բռնութեամբ տիրացած կալուածատէրն է տանում։

Մեր յօդուածի համառօտութիւնը չէ ներում ուրիշ մանրամասնութիւններին մէջ մտնել։ Այսքանը միայն կանենք, որ նոյն երկրում, մի և նոյն հողի վրա բնակվող մասնատական մշակի

Դայչ անունով որ նորերումս փախած էր Կիէվի բանդի քաղաքական յանցաւորների բաժնից։ Ս. Պետերբուրգում լուր տարածվեցաւ որ այդ երիտասարդը գնեւրալ Մեղեցօլի սպանողներից մինն է։ Բայց «Русск. Миръ» լրագիրը ասում է որ այդ լուրը բոլորովին անհիմն է։

ԹԻՖԼԻՍԻ ռուսաց թատրոնական խումբը հարստացաւ դարձեալ երկու նոր եկած արտիստներով։ Մինը օրիորդ Ալէկսանդրն է, իսկ միւսը պ. Ստէլսկի։ Օրիորդը շատ համակրական դերասանուհի է, բայց ախտա որ բուրովին բեմական ձայն չունի։ Նրա ձայնը կոչու և անդուրեկան է։ Պ. Ստէլսկուն մենք տեսանք երկու դերի մէջ՝ Օստրովկու մի պիէտայում և Շէկսպիրի «Համլէտի» մէջ։ Թէ Համլէտի դերի մէջ և թէ ռուսաց ժամանակակից թատրոնական գրվածներում պ. Ստէլսկու խաղը մշակված, ուսումնասիրած, խելացի խաղ է, թէ՛ն փոքր ինչ միակերպ։ «Համլէտը» մի քանի անգամ ներկայացվեցաւ և ամեն անգամ մեր թատրոնի դահլիճը լի էր։

Մեզ գրում են ԲԵԼԻ-ԿԼԻՒԶԻՑԻՑ որ վերջին երկու շաբաթներում այդտեղի կուրբի դահլիճում սիրողների երկու ներկայացումներ տրվեցան ռուսերէն լեզուով, յօգուտ Ս. Պետերբուրգի չքաւոր ուսանողների, Ռուսաց սիրողների մէջ կային մի հայ երիտասարդ և մի հայուհի։ Թըղթակիցը լսել է որ առաջին ներկայացումից գոյացել է 240 ռուբլ, իսկ երկրորդի արդիւնքի մասին տեղեկութիւն չունի, թատրոնական ներկայացումներից յետոյ դահլիճի աթոռները վերցվեցան և այցեւորները պար եկան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՐԻՔԻԱ

«Polit. Corresp. Լրագիրն Երզնումից գրում են օգոստոսի 10-ին հետեւեալը։

«Այստեղ մի քանի օր է արդէն որ ժողովուրդների ճիշդ գաղթելն է նկատվում։ Փողոցները լցված են գնացող ընտանիքներով, որոնք մեծ մասամբ գնում են երկու հակառակ ուղղութեամբ։ Գաղթականների մէջ մասը դիմում

հետ այս բաները չեն պատահում։

Կառավարութեան պաշտօնակալների դատաստանական խորութիւնները մասնատականների և ոչ մասնատականների վերաբերութեամբ ոչ սակաւ գրկում են հայերին իրանց արդար իրաւունքներից, և նրանց մասին կատարված անիրաւութիւններն, միշտ մնում են անպատժ։ Այս հանգամանքներում հայը մի ձար միայն ունի դատաւորի արդարութիւնը իր կողմը գրաւելու։

Այն է՝ իր արժաթով ամուգել նրա կաշառասէր սիրտը։ Իսկ դա իրատ հազիւ է յաջողվում նրան, որովհետեւ շատ անգամ իր արժաթով դատաւորի քսակը լցնելէն յետոյ, նա դարձեալ կորցնում է իր իրաւունքը։ Դատաւորն միշտ զէպի այն կողմն է թեքվում, ուր ուժ կայ, բայց Տաճկաստանում ուժ և զօրութիւն ունի միայն մասնատականը։ Թողեալ այդ, մասնատականը վայելում է օրինական առանձնաշնորհութիւններ, որից զուրկ է ջրիտոնեան։ Օրինակ, նա կարող է անթիւ վկանելով իրան արդարացնել բայց հայի վկայութիւնը չէ ընդունվում։ Եւ վկայութիւնը մասնատական օրէնսդրութեան մէջ մեծ դեր է խաղում։ Դատաւորն չափ ժամանակ չէ, որ Կ. Պոլսի լրագիրներում կարդացինք մի զէպը, որ պատահել էր վառայ կողմերում։ Մի մասնատական վկանելով մի հայի իրան պարտական էր արել, և բանտ դնել տալով, փողը ստացաւ։ Այսպէս ամեն մասնատական կարող է ցանկացած հային կողպատել։ Վկաներ նրա համար պակաս չեն լինի։ և ինքն դատաւորը իր նպատակ նրա չաբաղործութեանը, որովհետեւ ստացած արժաթի մի մասն էլ իրան է պատկանում...

Մասնատականը ամեն մի հայի ճակատի վրա կարգում է այս խօսքերը՝ «դաւուր և ռայեայ» — և այս խօսքերի մէջն է բովանդակվում նրա համոզմունքի ամբողջ վարդապետութիւնը, թէ հայը ուրիշ ոչինչ չէ, բայց միայն Աստուծոց իրան չնորձված մի որս, որին նա իրաւունք ունի ամեն կերպով իր պիտոյքներին ծառայեցնելու... Եւ մասնատականը չէ սխալվում իր կարծիքի մէջ, քանի որ հայը իր կրաւորականութեամբ արդարացնում է նրա կարծիքը...

(Կը շարունակվի)

է դէպի Ղարս և Կովկասեան սահմանը, միւսը
դէպի Տրապիզոն և առանց որ և ինչ նորա-
մտութեան խնդիր կարելի է գուշակել որ
խօսքը հայերի և մահմետականների վրա է,
որոնցից հայերը ձգտում են դէպի առևտու
գրաւած երկիրները, իսկ մահմետականները
հակառակ կողմն են դնում Բերլինի դաշ-
նագրի վճիռները, որոնք վերաբերում էին հա-
յերին, բոլորովին չեն բաւականացնում նրանց:
Մինչև անգամ Թիւրք-անգլիական դաշնագ-
րութիւնը, որը տալիս է Սնդիկային այնպիսի
ճիշդ և մեծ ազդեցութիւն Հայաստանում
մտցնելու վերանորոգութեան գործի վրա,
չէ կարող առանձնապէս հանգստացնել հա-
յերին իրանց ապագայի վերաբերութեամբ:
Նորա մտցնելու վերանորոգութիւնների վրա
եղած անգլիական վերահսկողութիւնը բա-
ւարար երաշխաւորութիւն չեն ընդունում և
կասկածում են այդ ընթացիկների իրա-
գործման վրա: Սնդիկ-թիւրքաց դաշնադրու-
թիւնը, ընդհակառակը, աւելի մեծացրեց
հայերի կասկածը դէպի իրանց մօտիկ ապա-
գան, և այս պատճառով զօրեղացրեց նրանց
մէջ սէր դէպի գաղթականութիւն: Հայերը
Արեւելքում ամենահարգէտ և ընդունակ
վաճառականներ են, բայց այնու ամենայնիւ
վախենում են անգլիական կոնկուրենցիայից,
որը, ամեն յարմար ժամանակ անպատճառ կը
կանգնի նրանց դէմ, և այս պատճառով մեր
տաւջ այն զարմանալի տեսարանն է բացվում,
որ հայերը հէնց այն դարաշրջանի սկզբին, երբ
նրանք պէտք է ստանային առաջադիմութեան
և զարգացման նոր երաշխաւորութիւններ,
թողնում են իրանց հայրենիքը, որը մնում է
Թիւրքաց տիրապետութեան տակ, և իրանց
ազգային գոյութեան ծանրութեան կենտրոնը
անգափօնում են Ռուսաստան: Տեղական մահ-
մետականների գաղթականութիւնը սկսված է
այն յուսով, որ ռուսներից խլին շատը այն
բանից ինչ որ նրանց Բերլինի կոնգրէսը պար-
տաւորեցրել է: Չէ կարելի հաւատալ թէ ինչ-
պիսի եռանդով աշխատում են Թիւրքերը Բա-
թումը չը տալ ռուսներին Այստեղից Բաթում
ուղևորվեցան 20,000-ից ոչ պակաս առողջա-
կազմ մարդիկ լազերին օգնելու համար: Որով-
հետեւ այս մարդկանց ընտանիքները վախե-
նում էին որ ռուսաց իշխանութիւնը կը ստիպէ
նրանց այս բանի համար պատասխանատու
լինել, նրանք թուով 600 մարդ գերադասեցին
Երզնուից գուրս գալ, և գաղթեցին առժա-
մանակ Բայբուրդում և նրա շրջակայքում:
Երզնուից օրից օր աւելի և աւելի մեծանող քա-
ղաքի տեսք է ստանում, մանաւանդ որ նրա
բաւական նշանաւոր բերդապահ զօրքը վեր-
ջին շաբաթներում շատ քաջացաւ: Այն վեր-
ջին փաստը չէ կարելի, այնու ամենայնիւ,
բացատրել որ ռուսաց կառավարութիւնը լա-
հայեացք ունի գործերի դրութեան վրա:
Մենք մինչև անգամ հակառակն ենք տես-
նում, Ռուսաց զինուորական բարձր շրջան-
ներում սպասում են դեռ ևս զանազան անբա-
ւականութիւնների և նախատեսում են կա-
տարելի կոնկրետ բանից Բաթումից և ուրիշ
զանազան տեղեր: Այստեղի բերդապետը տե-
ղեկութիւններ ստացաւ որից երևում է որ
Տրապիզոնի և Խնիկալայի նահանգների մէջ
զինուորական մեծ շարժումներ են լինում:
Ամենից առաջ իմացված է, որ Բ. Կուռը
անդադար մեծացնում է Թիւրքաց զօրքը Հա-
յաստանում: Դեռ միայն Խնիկալայի նա-
հանգում գտնվում է 8,500 մարդուց բաղա-
ցած կանոնաւոր զօրքի մէկ բաժին, և այս
օրերս նոյնպէս նորից ուղարկված են արաբս-
տանցի ընդհանրիկ երեք բաժնեւոր: Բայ-
բուրդը, Երզնուի և Մուշը լրված են զօրքերով:
Այս տեղերում զետեղված է Մեծօպտամիա-
յից եկած ընդհանրիկ 23 բաժանիւն և լրիւ-
կայում է: Պոլսից գալու են արտիլերիայի
շատ պաշարներ և զենքեր: Բաթումից եկած
տեղեկութիւնների համեմատ, Դերվիշ-փաշան

մինչև անգամ չէ մտածում Բաթումը դա-
տարկելու: Ընդհակառակը, այնտեղ անգա-
դար գալիս են ալեւորի, բրնձով, գարիով և
այլ բաներով լրված նաւեր, չը նայելով որ
այնտեղի պաշարեղէնների պահեստները չա-
փից գուրս լրված են: Բաթումի մէջ գտնվում
են 12 կանոնաւոր բաժանիւններ, այն ինչ
20 ուրիշ բաժանիւններ զետեղված են մա-
սամը սահմանի վրա և մասամբ Լիվանի շը-
ջակայքում: Լազերից 15,000 մարդիկ ան-
դադար զինուորված պատրաստ են մասամբ
սահմանի վրա, մասամբ Արտվինեան քարան-
ձաւներում: Թիւրքաց կառավարութեան Բա-
թումում հաւաքած պաշարը և պատե-
րազմական զօրծիքները, ինչպէս երևում է,
լազերի համար են նշանակված, որոնց առաջ-
նորդները նորերումս դեռ ևս խորհուրդ էին
անում Չուրուկուում Դերվիշ-փաշայի մէջ
շտաբօֆիցերի մասնակցութեամբ: Մի և
նոյն լրագիրը Կ. Պոլսից հաղորդում է հե-
տեւեւրը. Որքան անգլիացիք հոգացողու-
թիւն և գործով ունեն դէպի Բուսնիայի
Թիւրքերը, այնքան հայերը դուրս կերպով
գանդաւորում են անգլիական կառավարու-
թեան և նրա ներկայացուցիչներին, իրանց
ցոյց տված խիստ սառնութեան վրա: Մի
քանի օր առաջ հայոց պատրիարքի տեղա-
պահ արքայան Գրիգորեան Ներսէսը, հակա-
հաստեանների ներկայացուցիչ Էմֆիլիան
և բողոքական հայերի քաղաքական գլուխ
Օհան էֆէնդի Մաթթէոսեանը ուղևորվեցան
Պրինկիպօ կղզին ծովագետ Զօրբիի մօտ,
հարցնելու նրան, թէ կարող են արդեօք նրանք
յոյս ունենալ սրանից յետոյ Անգլիայի հո-
վանաւորութեան վրա Ասիայում և այս պե-
տութիւնը կը պաշտպանի արդեօք իրանց
անձնաւորութիւնները, ստացուածքը և իրանց
աշխատութեան պտուղները: Մովսէսեանը ան-
կասկած քաջ օֆիցէր է, բայց բոլորովին դի-
պլոմատ չէ, նա չը կարողացաւ, ինչպէս հար-
կաւոր էր, ձևակերպել իր պատասխանը և
ասաց նրանց միայն հետեւեալը. «Ինքնատե-
րութեան մէջ չունենք: Մենք կանենք ամեն
ինչ որ կարող ենք, բայց մեզ համար շատ
գիտաւոր կը լինի հաւասարեցնել ձեզ իրա-
ւունքներով մահմետականների հետ: Նրանք
կը սկսէին հաստատել, որ նրանց հալածում
են, և այս բոլորը մահմետական արեւելքում
գիտաւորութեան աղաղակներ կը բարձրացնէ:
Մենք, պէտք է ասած, մահմետականներին
խնայելու այնքան փոքր ունենք, որ այդպիսի
սխալ չենք անի: Յոյսներդ դրեցէք, պարոն-
ներ, մեր բարի կամքի վրա, մի պահանջէք
մեր կառավարութեանից մի որ և ինչ անկա-
րելի բան: Կարող էք երեւակայել որ հա-
յերը այդպիսի ընդունելութեամբ շատ բա-
ւական չը մնացին: Վանից եկած լուրերի
համեմատ, այս նահանգի մահմետական աղ-
գաւանութիւնը վերջին ժամանակներում
նորից սկսեց սարսափելի կերպով ճնշել հայ
ընտելներին: Պ. Լայարդը, որը միշտ պարա-
պում է միայն երկրի տնտեսական և ֆինան-
սական գործերով, հովանաւորում է այժմ
անգլիական մի մեծ ընդհանրութեան, որը աշ-
խատում է կոնցէսիա ստանալ հէրակլեան
քարածուխի հանքերը մշակելու համար: Այս
անսպառ հարուստ հանքերը սփռվում են ա-
հալին տարածութեան վրա և ձգվում են
Սև ծովի երկայնութեամբ եղբերի վրա, 200
կիլոմետրից աւելի երկայնութեամբ: Պ. Լա-
յարդի և բազիլէի օգնութեամբ այս յան-
ձնաժողովը աշխուրժեան մեծ յոյսեր ունի:
Ամերիկական զինեալ Մետո, որը կոնցէսիա
է ստացել Նաֆֆայից մինչև Նուրաղիւմ եր-
կաթուղւոյ շինելու համար, 5000 Թիւրքաց
լիւր (120,000 Ֆրանկ) գումարի կաշառքնե-
րածանց զանազան աստիճանաւորներին, ո-
րոնց հետ գործ ունեն նա:»

«TEMPS» ԼՐԱԳՐԻ ՄԻ 80ԴՈՒՄԻ

Փարիզի «Temps» լրագրում կարգում ենք
հետեւեալ յօդուածը Թիւրքաց Հայաստանի
գրութեան մասին:

Փիլիսոփայ ստացած մի մասնաւոր հեռա-
գրի հաղորդում է մեզ որ հայերը սկսում
են սաստիկ գանգաւակել որ Բերլինի դաշ-
նագրի Հայաստանին վերաբերեալ յօդուածը
չէ իրագործվում և երեւում է որ հայերի ան-
բաւականութիւնը զլուրաւորապէս Անգլիայի
դէմ է ուղղված: Մեր տեղեկութիւններին
համեմատ Հայաստանում դիտաւորութիւն
ունեն ստորագրել մի բողոք, որի նպատակը
պէտք է լինի պահանջել որ Բերլինի դաշ-
նագրի գորութեամբ անյապաղ միջցիա
կազմվի հայերից:

Անգլոք ենք համարում ասել, որ Բեր-
լինի դաշնագիրը ոչ մի տեղ չէ յիշում հա-
յերից միջցիա կազմելու մասին: Այդ միջ-
ցիայի կազմակերպութիւնը յիշված էր հա-
յոց զէնգաւորների պահանջների մէջ, որոնց
կոնգրէսը անտես առաւ: Հայերը աւելի իրա-
ւունք ունեն, ուրեմն, գանգաւորութիւն
նոյն իսկ Բերլինի դաշնագրից, քան թէ նրա
այս կամ այն յօդուածի չիրագործվելուց:

Բայց իրերի դրութիւնը Հայաստանում
երևում է աւելի անբաւականացուցիչ քան
թէ որ և ինչ ժամանակ, և ինչպէս մենք
տեղեկանում ենք, այն օրպէս հասած պէտք
է համարվել, երբ պետութիւնների գործա-
կանքը պէտք է սկսէին գործ դնել դաշ-
նագրի գորութեամբ նրանց տուած հսկողու-
թեան և կոնտրոլի իրաւունքը:

Ենթադրու է յոսնիսի Կ. պայմանադ-
րութիւնը Անգլիային իրաւունք և մասնաւոր
պարտաւորութիւն յատկացրեց հսկել Փաբր-
Նասիայում խոստացած վերանորոգութիւնների
իրագործման մասին, բայց Հայաստանում Բեր-
լինի դաշնագրի գորութեամբ Անգլիան բա-
ժանում է այդ իրաւունքը և պարտաւորու-
թիւնը կոնգրէսին մասնակցող բոլոր մնացած
պետութիւնների հետ:

Անգլիական պարլամենտի ընդդիմադրու-
թեան ճարտարախօսները շատ անգամ իրանց
ճառերի մէջ ուշադրութիւն են դարձրել այդ
կրկնակի բնաւորութիւն ունեցող հսկողու-
թեան վրա, որ պէտք է կատարվի Նուրաղայի
ձեռքով Բերլինի դաշնագրի գորութեամբ և
Անգլիայի ձեռքով յոսնիսի Կ. պայմանա-
դրութեան անունով: Նրանք իրաւունքով
պնդում էին, որ ռուսաց կառավարութեան
ազնւանները Հայաստանում կատարելապէս
հսկողութիւն գործելու նոյն իրաւունք ու-
նեն, ինչպէս և Անգլիայի ազնւանները, այդ
զուգադրութիւնը կարող էր հասցնել երկ-
պառակութեան:

Եթէ հայերի պահանջողութիւնները չը
կարողանան զարթեցնել անգլիական կառա-
վարութեան խնամատարութիւնը, շատ հա-
ւանական է որ նրանք նպատաւոր ընդունե-
լութիւն կը գտնեն ռուսաց կառավարութեան
կողմից:

Ռուսաց լրագիրները շատ անմխիթար գոյ-
ներով են նկարագրում Հայաստանի արդեան
վիճակը:

Հայերի գլխաւոր գանգաւորները նրա մէջ
են կայանում, որ բոլորեւրեք և չէրկեաները
շարունակում են մենակ իրաւունք ունենալ
զենքեր կրելու ամբողջ երկրի մէջ և այդ
իրանց առաւելութիւնը ի չար են գործ դը-
նում, ինչպէս միշտ արել են և կը շարունա-
կեն անել Բ. Կուռը թէ և ուղարկեց Հա-
յաստան իր երկու կոմիտարներին, բայց զու-
յոյս կը լինէր սպասել մի ծանր հետեւանքի այդ
պատուիրակների գործունէութեանից: Քիֆ-
լիսից ստացած մեր տեղեկութիւններին նա-
յիւրով հայերի անբաւականութիւնը սպառ-
նում է ընդունել Անգլիայի դէմ յուսմունքի
ձեւ և լուրջօրի կարիքներ անգործութիւնը
շարունակվելով այն անփախելի հետեւանք
կունենար, որ Հայաստանը հեռուցւած կը յան-
ձնվէր ռուսաց ներգործութեանը:

ԱՐՏԱԳՐԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«ГОЛОСЪ» լրագրին գրում են Երզնուից-
«Մեր քաղաքը հետզհետէ կորցնում է իր աղ-
գաւանութիւնը: Ռուսները չուտով հեռանա-
լու պատճառով հայերը պատրաստվում են
զաղթել Ռուսաստան, վախենալով իրանց ապա-
գայի մասին Թիւրքերից: Մահմետականները,
իրանց կողմից չը հաւատալով ռուսների հեռա-
նաւուն, նոյնպէս զաղթում են: Արդէն 500 Թիւրք
ընտանիքներ թողնելու քաղաքը: Թիւրքաց զօ-
րքը երթեկեկութիւն են անում Բայբուրդի,
Երզնուի և Մուշի մէջ: Մուշի սանջակում

Թիւրքաց զօրքերը քսան և երեք ամիս շարու-
նակ իրանց ռոճիկը չը ստանալով, ապրում են
կողոպտելով ժողովուրդը: Տրապիզոնի և Երզ-
նուի մէջ գտնված ճանապարհը վտանգաւոր է
դարձել աւաղակութիւնների պառնաւորով: Մի
քանի օր առաջ Տրապիզոնից Երզնու եկած
վաճառականները պատմեցին որ ճանապարհի
նրանցից զոգացան 30,000 Ֆրանկ ոսկի:»

«Polit. Corresp.» լրագրին Կ. Պոլսից հե-
ռագրում են, որ Թիւրքաց միւնիստրների խոր-
հուրդը շուտով կը քննէ պ. Լայարդի ներկա-
յացրած նախագիծը փոքր Ասիայում մտցնելու
ընթացիկների մասին: Ասում են, թէ հաւանական
է, որ Բ. Կուռը չի ընդունի նախագիծը:

«Ալեքսանդր» «National Zeitung» լրագրին
հեռագրում են հետեւեալը. «Երեք օր առաջ
համոզված էին, որ աւստրո-թիւրքաց դաշնագ-
րութիւնը կը ստորագրվի, իսկ այժմ այդ համադ-
մունքը անհետացել է: Թիւրքաց զիպոստալի
ընդհանուր ձեռն համեմատ Բ. Կուռը նոր դիտա-
ւորութիւններ է ծագեցնում: Աւստրիական զօր-
քերը ժամանակաւորապէս զաղարկեցրել են
իրանց ընթացքը դէպի Բոսնիա և Հերցեգո-
վինա, Նորա սպասում են օգնական զօրքերին:
Դենեալ Ֆիլիպովիչի աջողութիւնները, մասնա-
ւանդ Սերաիւօ քաղաքի վերցնելը, Բոսնիայի
զաւառների մահմետական ազգաբնակչութեան
վրա ծանր տպաւորութիւն գործեցին: Մահմե-
տական ապստամբներին սաստիկ վախեցրեց
աւստրիական թնդանօթիների նպատակին հաս-
նող կրակը:

«Բէյութի ընկերութեանը» վիէնայից հե-
ռագրում են, որ աւստրիական զօրքերի կազմա-
կերպելը արդէն վերջացած է, երբ դրանք կը
միանան զինեալ Ֆիլիպովիչի զօրքերի հետ, այս
վերջինների թիւը կը հասնի 125,000-ից մինչև
130,000

«Polit. Corresp.» լրագրին Բէյութից հե-
ռագրում են, որ իշխան Միլանը հրապարակեց իր
միտաւորներին, որոնք հրաժարական էին տուել,
մնալ իրանց պաշտօնների մէջ մինչև ինչեւ վե-
րադառնալ ճանապարհորդութեանից: Իշխան Մի-
լան մտադիր է այցելել Նիշ, Պրիստ, Դրանիա
և Լեզիովայ: Գրուիչ և Իովանովիչ միմիայն
չեն կամենում մնալ իրանց պաշտօնների մէջ,
քանի որ միմիայնների խորհրդի նախագահը
Իստիֆէն է:

«ГОЛОСЪ» լրագրի թղթակիցը վիէնայից
գրում է, որ այնտեղ լուր է տարածվել կոմս
Անդրայի հրաժարական ներկայացնելու մասին:
Ասում են, որ հրաժարականը դեռ ևս չէ ըն-
դունված, բայց կայսրը վճռել է ընդունել Թըր-
թակիցը աւելացնել է, որ գերմանացիները և
սլավոնները շատ ուրախ են, որ ռուսաբացի
կոմս Անդրայի կը թողնէ առաջին միմիայն
պաշտօնը:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԵՐՑ

ԼՈՒՂՈՆ, 27 օգոստոսի (8 սեպտեմբերի):
Մեհմետ-Ալի-փաշա չը կարողացաւ փախել
ալեւանաւ ապստամբներից, որոնք ուզում էին
նրան չըծապտել Նախովի մէջ: Նա ապա-
ստամբեցաւ մի ամբարի մէջ, Նորոնք ապա-
ստամբները նրան չըծապտեցին և սպանեցին
նրան իր ուղեկիցներով: Մարտախիթը այն է
կըլել, որ Մեհմետ-Ալին հրաժարվեցաւ աւս-
տրիացիների դէմ յարցաւորական ոյժերի կազ-
մելուց: Շուտով Թիւրքիան գնապաւորութիւն
կուղարկի Ալգանիստան:

Վիէնա, 27 օգոստոսի (8 սեպտեմբերի):
Աւստրիացիները օգոստոսի 26-ին գրաւեցին
Տրէբինիէ առանց ընդդիմադրութեան: Նոյն
թիւն աւստրիացիները գրաւեցին Պրէթորոյ:
ԲԵՂԻՆ, 20 օգոստոսի (9 սեպտեմբերի):
Պարլամենտը բաց անելու ժամանակ կարգա-
ցած զահական ճառի մէջ խօսվում է սոցիա-
լականների դէմ ուղղված օրէնքի մասին: Գա-
հական ճառի մէջ յոյս է յայտնված, որ այդ
օրէնքի նախագիծը կը յուղենվէ պարլամենտից,
որով կը յաջողվի վերջ դնել վտանգաւոր
շարժմանը և մոլորվածներին ուղղել ճանա-
պարհի դարձքով:

Վիէնա, 28 օգոստոսի (9 սեպտեմբերի):
Դենեալ Ֆիլիպովիչը յայտնում է, որ երեք ժամին
կէսօրից յետոյ ստիպված էր հրաժարվել
յարձակվելուց Բիխալի մօտ գտնված ամրա-
ցած դիրքի վրա և իր տեղը վերադառնալ:
Աւստրիացիների կորուստների մասին դեռ ևս
մանրամասն տեղեկութիւն չը կայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 29 օգոստոսի: Սկսվեցաւ
ցուրտ աշունք: Պետական բանկի 59/100 տոմ-
սակը առաջին շրջանի արժէ 97 ր., երկրորդ
97 7/8 ր., երրորդ 95 ր. 75 4., չորրորդ 95
ր. 25 4., ներքին 59/100 առաջին փոխառու-
թեան տոմսակը արժէ 236 ր., երկրորդ 235
ր. 75 4., արեւելեան 93 3/8 ր., ոսկի 7 ր.
94 4.: Ռուսաց 1 բուրլ Լուրջի վրա արժէ
25 1/16 պէնս, ռուսաց 100 բուրլ Գերմա-
նիայի վրա արժէ 212 մարկ, Փարիզի վրա
261 Ֆրանկ 50 սանտիմ: Տրապիզոնից
գանդաղ է:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Օգտագործողի կողմից լայն կը տեսնեն Ս. ՄԱՆ-ԻՆԵՍՏԱՆԻ ճեպարանը նոր աշխատանքները:

1) Ընթերցարան հայերէն լեզուի. «ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՆԻ ՀԱՅՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՐԱՆ, Երրորդ տարվայ ՈՒՍՄԱՐԻՔ ՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՐԻՔ» անունով:

2) «ՀԱՄԱՌՈՑ ՄԱՆԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ»
Ցանկացողները ստանալ յիշեալ գրքերը եւ ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՑ» կամ Զաք. Գրիգորեանի գրաւաճառանոցը:

3-3

Տէօրիտիկական և փորձնական դասեր հասարակ և կրկնաթիւ գրադասութեան (բանիկ, ֆարիկի առեւտրական, կոմիտայօնի երկաթուղու, բաժանորդական և այլն) և առեւտրական թուականութեան, նմանապէս և կրկնաթիւ սրտեմով:

Կուրսը յարժեքովում է 6 ամիս:

10. Խաչատուրեան

Գիմել Լաբորատորի փողոց. Պատրիկ տանը կամ Թիֆլիսի աղեւտականի կալուածական բանկը:

1-3

Գրուրի եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կոմիտայ» գրաւաճ. Զաք. Գրիգորեանի:

1. Պատրիկայէրի—կատակերգութիւն, երկու տարաւածով (մանկական թատրոնի թարգմ. Թ. Նազարեանց. տպագրութիւն 2. Գրիգորեան:

Գինն է 20 կոպէկ:

2. Նախապաշարմունք—I հատոր. աշխատասիրութիւն Թ. Նազարեանց:

Գինն է 50 կոպէկ:

Հուտով զուրս կը գալ մամուլի տակից:

1. Ղուկասեանց—ընթերցարան. երբ. տպագ. Գինն է 40 կոպէկ:

Ամենակարճ միջոցում զուրս կը գալ տպագրութեանց. Երբ. այն է՝ ռուսերէն, ֆրանսերէն և հայերէն լեզուներով մեր «Արվակ»-ի հիմնիկ-վան լրագիրն են» անունով բնագրերը: Դրա տպագրութեան համար բաց արինք յատկապէս Տէր-Յովհաննիսեան կանդիտներով, որ դռն-վում է «Արվակ»-ի հրատարակիչ կարգում, կամաւոր ստորագրութեան:

Գրիգոր Տէր-Մկրտչեանի կողմից

3-3

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆ-ՆՈՅՑ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՂԵՐԵՈՒՄ)

Վաճառվում են հետեւեալ նոր հրատարակութիւնները:

1. Նախակրթական և հայերէն գրաբար և լեզուի, աշխատ. Գ. Արք. Ալվազեան, Զորորդ տիպ. ճոխագոյն քան առաջինները: Գինն է 40 կոպէկ:

2. Սկզբունք Բրիտանական հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ. համառոտ գաղափար սրբազան պատմութեան և քրիստոնէական վարդապետութեան ծրարական-տարրական ուսումնարաններ համար, բազմաթիւ գեղեցիկ պատկերներով զարդարւած, աշխատասիրութիւն Ստեփաննոս քահ. Տէր Ստեփաննոս Գինն է 50 կ.:

3. Երոյնչեալ գրքերը ընդունված են իբրեւ դասագիրք Թիֆլիսի թեմի պ. թեմական վարդապետից: Վաճառվում են բացառապէս կենտրոնական գրաւաճառանոցում: Գումարով և կանխիկ գումարով գնողներին նշանաւոր զիջում և վնաս:

3. Մամուլի տակից զուրս եկաւ և այս օրերս կը սկսուի վաճառուի պ. Ղազարոս Աղայեանի «Ուսումնի մայրենի լեզուի» անունով դասագրքի երրորդ տպագրութիւնը, տպագրված ամենապատուական թիֆլիսի վրա: Գինն է 15 կ.:

Նոր տպագրութիւնը վաճառվում է միմիայն կենտրոնական գրաւաճառանոցում: Պատուէրները ընդունվում են:

«ՀՈՐՏՈՒԹԱՆ ԻՐԱՆԻՆԻՔՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»

Գումարով Գալանթարեանցները, ռուսերէն լեզուով, ծախվում է Բերեշտովի գրաւաճառանոցում, Թիֆլիսում, Գործնականի պրոս-պէկտի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախ-սով 80 կոպէկ:

5-6

«Топл. Объяв.» լրագրի գրառեւեակը տեղադրված է Դիմորդի փողոցի վրա, Ար-ծրոնի թիֆլիսի:

2-2

«ԲԱՐՆՈՒԻ» «ՌՈՒՍՏԱՍՏԱՆ» ՀԱՄԱՐՈՒՄ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏԵՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՄԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԵՐԱՆ:

ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՅՄԱՆ—ՀԵՆՆԻԳ

Մարմնում է ՀԵՆՆԻԳԻ ՊԱՎԼԻԴՈՆՈՒՄ ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՉ ՎԱԳՐԱՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-

ԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ «ԳԱՂԱՔԻ»

ՄԵՋ ԳՏԵՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ:

Կողմատի մԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԸ յայտնում է հետեւեալ մԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԻ մասին ցանկացողները պէտք է խնդրէ ներկայացնել բժշկական մասի հաւաքարձի անունով (Ստեփաննոս փողոց, իշխան Անդրեյկովի տուն):

Մանկաբարձական արհեստի բարձր կուրսեր մտնելու համար, որ իրաւունք է տալիս ստա-նայ մանկաբարձի վկայական և մտնել պետական ծառայութեան իրեւ. քաղաքական և գաւառա-կան մանկաբարձներ, որ տալիս է բժշկական կանոնադրութեան յօդ. 511 մէջ յիշեալ արտո-նութիւնները պահանջվում է դիմելու. ռուսաց լեզուից ուղիղ կարող և գրել, պատմել, գրուր և բերանացի կարգադրած, թուարանութեանց չորս գործողութիւնները (գումարում, հանում, բազմապատկում, և բաժանում), անունական թուր և հասկացողութիւն կո-տորակները: Իսկ նրանցից, որոնք կը ցանկանան մտնել ստորին կուրսերը, որոնք աւարտելուց կարող և գրել և բերանացի պատմել կարգադրած:

Ինչպէս առաջինները նոյնպէս և վերջինները պէտք է 16 տարեկանից փոքր և 30 տա-րեկանից մեծ չը լինեն:

Խնդրէ հետ պէտք է լինեն մեծրիկական և ծնողների կամ ամուսնի (եթէ մտնող ամուսնացած է) թոշակաւորութեան վկայականները:

Թոշակաւորութեան հետեւեալ է. եթէ ևսկ աշակերտութեանց տարեկան 40 ռուբլ. իսկ գի-շերթիները, որոնց բոլոր հոգները ռուսաց տարեկան կը տան, 240 ռուբլ. և միանուագ 60 ռուբլ. սկզբնական ծախսերի համար:

Տարեկան թոշակաւորութեան մոյնում է սկզբից և չէ վերադարձվում, եթէ որ և է պատ-ճառով աշակերտութեան ռուսացական տարվայ ընթացքում թողնէ ռուսացական:

Ուսման կուրսը երկու տարվայ է:

Մանրաման տեղեկութիւնները կարելի է ստանալ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆՈՒՄ:

5-6

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՂԵՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷՃԱՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ, ԵՆ ՏՐՎՈՒՄ

ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍ, 1878.

ՕԳՈՍՏՈՍԻ 30.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՅՑ		Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ	Բ. Կ.		ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐԿԱ-ԹՈՒՂԻ	Բ. Կ.		ՓՈՍՏ	ԲԱՇԿԱՆՈՑ	«ՄՇԱԿ» ՊԱՏԱՍԻՆԵՐ
(Օգոստոսի 29-ին)					Բ.	Կ.		Բ.	Կ.			
Ոսկին (պոլոմիդերիալը)	8	05	—	Կովկասի և Ան-	—	—	Թիֆլիսից 9	—	—	—	—	—ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎՈՒՄ Մ. Մ.
2/ին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—	—	գրկավարի քա-	1	—	(ճանապարհորդների քաղաքը 9	—	—	—	—	Նամակը այնպէս է գրված, որ
2/ին 20 կ. 72 պր. 1000 մ.	1250	—	—	ղաւթները	2	—	ժամին 21 ժամը առաւօտեան	—	—	—	—	չը նայելով մեր բոլոր ցանկու-
Վիդրիչի 50/100 առաջիկ փո-	236	—	—	Ռուսաստան	3	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	թեանը չենք կարող տպել:
խառնութեան տոմ. 100 օ	235	—	—	Անտրիա	4	—	գնացքը) երկուսիս 5 ժամ. 18	—	—	—	—	—ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎՈՒՄ Ա. Ա.
Երկուսի կուրսը 260—	100	—	—	Անգլիա	5	80	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	Նամակը կը տպենք և յոյս ու-
Մանուկի կուրսը Օգոստի	9	65	—	Ֆրանսիա	3	75	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	նքանք, որ յիշեալ վարդապետը
Վենայի կուրսը ամէ 121 զլ.	100	—	—	ԱՆԴՐՈՒՄ ԿԱՐԱՆԱՆ ԳՐԱՆԻ-	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	հրապարակապէս հայտնի կը տալ
Կարեւոր բարձր.	5	40	—	ԿԱՐԱՆԱՆ ԳՐԱՆԻ	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	իր վարմունքի համար, Շատ ու-
Առեւտրական բանիկ ալ-	315	—	—	(վերայի վրա № 38)	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	րախ ենք, որ ձեր իրաւունքը
գիւն 200 մ.	102	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	պաշտպանում էք:
Փոթի Թիֆլիսեան երկաթ-	7	45	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	—ԹԻՖԼԻՍ. Ս. Ա. Աստու էք,
թուղու ակցիան 125 մ.	7	35	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	որ գաղթական քահանայի հա-
Շաբաթը բնագիւ.	6	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	մար հաւաքած փողը ամբողջա-
Կարեւոր բարձր.	5	90	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	պէս նրան չենք տուել, Գրեմէք,
Կարեւոր բարձր.	11	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	որ հայ քահանաները Հին-Բա-
Բաւարական կրկնաւոր. Ա-	8	20	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	յաղէթի չըջանում նպատակով
միջկալի սերմից.	7	20	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	են հայերի գաղթականութեանը
Միւս տեսակը Կին սերմից.	6	50	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	յոյսով հայ քահանաներում և
Բուրգը թուլի	3	50	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	գիւղերում գաղթականի անու-
Միւս տեսակը Կին սերմից.	1	80	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	նով փողեր մուտալ:
Երկուսի կուրսը 260—	—	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	—ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎՈՒՄ Ա. Ա.
Մանուկի կուրսը Օգոստի	1	30	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	Նամակը կը տպենք և յոյս ու-
Վենայի կուրսը ամէ 121 զլ.	12	70	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	նքանք, որ յիշեալ վարդապետը
Կարեւոր բարձր.	200	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	հրապարակապէս հայտնի կը տալ
Առեւտրական բանիկ ալ-	130	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	իր վարմունքի համար, Շատ ու-
գիւն 200 մ.	48	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	րախ ենք, որ ձեր իրաւունքը
Փոթի Թիֆլիսեան երկաթ-	55	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	պաշտպանում էք:
թուղու ակցիան 125 մ.	25	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	—ԹԻՖԼԻՍ. Ս. Ա. Աստու էք,
Շաբաթը բնագիւ.	18	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	որ հայ քահանաները Հին-Բա-
Կարեւոր բարձր.	16	—	—	Կարեւոր բարձր.	—	—	թիւին 1 ժամը լիւսնի (խառն	—	—	—	—	յաղէթի չըջանում նպատակով